Հավելված №1
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2023 թվականի _____ __-ի №___-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՋԵՐՄԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց (այսուհետ՝ Լիցենզավորված անձ) կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության (այսուհետ՝ Տեղեկատվություն) ներկայացման ընթացակարգը:

2. Էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերում մատակարարման (այդ թվում՝ երաշխավորված մատակարարման) կամ էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի կամ էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի լիցենզիա ունեցող անձը Տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացնում լիցենզիայի ուժի մեջ մտնելու պահից սկսած, իսկ արտադրության կամ հաղորդման կամ բաշխման լիցենզիա ունեցող անձը՝ համատասխանաբար արտադրության կամ հաղորդման կամ բաշխման գործունեությունը փաստացի սկսելու պահից:

3. Մեկից ավելի լիցենզավորված գործունեություն իրականացնելու դեպքում Լիցենզավորված անձը Տեղեկատվությունը ներկայացնում է յուրաքանչյուր լիցենզավորված գործունեության համար առանձին:

4. Լիցենզիայի կասեցված լինելու դեպքում Լիցենզավորված անձը լիցենզիայի կասեցման մասին Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող ամսվանից մինչև լիցենզիայի գործողության կասեցումը վերացնելու ամսվան նախորդող ամիսն ընկած ժամանակահատվածի համար Տեղեկատվություն չի ներկայացնում:

5. Լիցենզավորված անձը Տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացնում առձեռն, փոստային կամ էլեկտրոնային եղանակով:

6. Էլեկտրոնային եղանակով Տեղեկատվությունը ներկայացվում է փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգի (Mulberry), Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի կամ Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի (www.psrc.am) առցանց հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով: Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի առցանց հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով Տեղեկատվության ներկայացման կարգը սահմանվում է Հանձնաժողովի որոշմամբ:

7. Փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգով (Mulberry) կամ էլեկտրոնային փոստով Տեղեկատվությունը ներկայացվում է Մայքրոսոֆթ Էքսել (Microsoft Excel) ձևաչափով՝ էլեկտրոնային ստորագրությամբ: Տեղեկատվությունը **լրացվում է** Յունիկոդ (Unicod) ձևաչափով, իսկ այլ տվյալներ ներկայացնելու համար կիրառելի են Մայքրոսոֆթ Էքսել (Microsoft Excel), Մայքրոսոֆտ Վորդ (Microsoft Word) և Փի Դի Էֆ (PDF) ձևաչափերը: Էլեկտրոնային ստորագրության բացակայության դեպքում Տեղեկատվությունը ներկայացվում է Փի Դի Էֆ (PDF) ձևաչափով՝ ստորագրված և սկանավորված:

8. Առձեռն կամ փոստային եղանակով կամ սույն կարգի 7-րդ կետով նախատեսված PDF ձևաչափով ներկայացման դեպքում, Տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացվում նաև Մայքրոսոֆթ Էքսել (Microsoft Excel) ձևաչափով՝ e-reports@psrc.am էլեկտրոնային հասցեին:

9. Տեղեկատվությունն առձեռն եղանակով ներկայացնելու դեպքում դրա ներկայացման օր է համարվում Հանձնաժողովում Տեղեկատվության և ուղեկցող գրության փաստացի մուտքագրման օրը, փոստային եղանակով ներկայացման դեպքում՝ Տեղեկատվության և ուղեկցող գրության փոստային բաժանմունքում ընդունվելու օրվա օրացուցային կնիքի արտատիպում նշված օրը, փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգով (Mulberry) ներկայացման դեպքում՝ Տեղեկատվության և ուղեկցող գրության էլեկտրոնային առաքման օրը, իսկ էլեկտրոնային փոստով ներկայացման դեպքում՝ Տեղեկատվության և ուղեկցող գրության ստացման օրը:

10. Հանձնաժողով ներկայացված Տեղեկատվությունում անհամապատասխանությունների, անճշտությունների կամ բացթողումների առկայության դեպքում Հանձնաժողովը տեղեկացնում

է Լիցենզավորված անձին և Լիցենզավորված անձն օրենքով սահմանված կարգով այդ մասին իրազեկվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով է ներկայացնում ճշգրտված Տեղեկատվություն կամ Տեղեկատվությանն առնչվող լրացուցիչ պարզաբանումներ:

11. Տեղեկատվության կազմման համար անհրաժեշտ սկզբնական հաշվառման փաստաթղթերում անորոշությունների, անճշտությունների և այլ վիճահարույց տվյալների առկայության կամ այդ փաստաթղթերի վավերացված չլինելու դեպքում Լիցենզավորված անձը սկզբնական հաշվառման առկա փաստաթղթերի կամ իր կողմից առավել արժանահավատ համարվող ցուցանիշների հիման վրա լրացնում և սահմանված ժամկետներում Տեղեկատվությունը ներկայացնում է Հանձնաժողով, իսկ հետագայում նոր հիմնավոր փաստերի առկայության կամ սկզբնական հաշվառման փաստաթղթերում փոփոխությունների կատարման դեպքում Տեղեկատվությունում կատարում է փոփոխություններ և Հանձնաժողով է ներկայացնում ճշգրտված Տեղեկատվություն՝ համապատասխան նշումով:

12. Հանձնաժողով ներկայացված Տեղեկատվությունում սխալների, վրիպակների ինքնուրույն հայտնաբերման դեպքում Լիցենզավորված անձը կարող է ներկայացնել ճշգրտված Տեղեկատվություն: Սույն կարգի կիրառության իմաստով հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված մեկից ավելի Տեղեկատվությունից առաջինը համարվում է հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված, իսկ մյուսները՝ ճշգրտված Տեղեկատվություն:

13. Տեղեկատվությունը Լիցենզավորված անձի կողմից կարող է համալրվել նոր տողերով կամ եղած տողերը կարող են տրոհվել բաղկացուցիչ մասերի:

Հավելված №2

Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 2023 թվականի _____
__-ի №___-Ն որոշման

Ձև №2-1

_____
(լիցենզավորված անձի անվանումը)

20___ թվականի _____
(ամիս, ամիսներ)

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 30ՄՎՏ ԵՎ ԱՎԵԼԻ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ (ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ) ԱՐՏԱԴՐՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

№	Անվանումներ	Չափի միավոր	Ընդամենը	այդ թվում՝ ըստ հիդրոէլեկտրակայանների						
				.....	.....	.....	.....	.....	.....	.....
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1.	Պայմանագրային հզորությունը	ՄՎտ								
2.	Վճարման ենթակա հզորությունը	ՄՎտ								
3.	Էլեկտրական էներգիայի արտադրությունը	հազար կՎտժ								
4.	Էլեկտրական էներգիայի օգտակար առաքումը, այդ թվում՝	հազար կՎտժ								
1)	*ուղիղ պայմանագրերի շուկայի երկարաժամկետ պայմանագրերի բաղադրիչում վաճառքի համար*	*հազար կՎտժ*								
2)	*ուղիղ պայմանագրերի շուկայի կարգավորվող բաղադրիչում վաճառքի համար*	*հազար կՎտժ*								
3)	*ուղիղ պայմանագրերի շուկայի չկարգավորվող բաղադրիչում վաճառքի համար*	*հազար կՎտժ*								
4)	*օր առաջ շուկայում վաճառքի համար*	*հազար կՎտժ*								
5)	*հաշվեկշռման ծառայություն մատուցողին վաճառվածի և նրանից գնվածի տարբերություն*	*հազար կՎտժ*								
ա.	*հաշվեկշռման ծառայություն մատուցողին վաճառված*	*հազար կՎտժ*								
բ.	*հաշվեկշռման ծառայություն մատուցողից գնված*	*հազար կՎտժ*								
6)	*էլեկտրական էներգիայի սպառում իր կարիքների համար*	*հազար կՎտժ*								
5.	Էլեկտրական էներգիայի ծախսը սեփական և տնտեսական կարիքների համար, այդ թվում՝	հազար կՎտժ								
1)	*հիդրոէլեկտրակայանի (հիդրոէլեկտրակայանների համայիրի) աշխատելու ընթացքում*	*հազար կՎտժ*								
2)	*հիդրոէլեկտրակայանի (հիդրոէլեկտրակայանների համայիրի) չաշխատելու ընթացքում*	*հազար կՎտժ*								
6.	Էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական կորուստները կայանի տարրերում, այդ թվում՝	հազար կՎտժ								
1)	*հիդրոէլեկտրակայանի (հիդրոէլեկտրակայանների համայիրի) աշխատելու ընթացքում*	*հազար կՎտժ*								
2)	*հիդրոէլեկտրակայանի (հիդրոէլեկտրակայանների համայիրի) չաշխատելու ընթացքում*	*հազար կՎտժ*								
7.	Էլեկտրական էներգիայի ծախսը սինքրոն կոմպենսատորի ռեժիմում	հազար կՎտժ								
8.	Սեփական և տնտեսական կարիքների համար էլեկտրաէներգետիկական շուկայում գնված էլեկտրական էներգիա, այդ թվում՝	հազար կՎտժ								
1)	*Երաշխավորված մատակարարման լիցենզիա ունեցող անձից գնված էլեկտրական էներգիա, որից՝*	*հազար կՎտժ*								
ա.	*____ կՎ լարման գծերով*	*հազար կՎտժ*								
	ցերեկային սակագնով	*հազար կՎտժ*								
	գիշերային սակագնով	*հազար կՎտժ*								
բ.	*____ կՎ լարման գծերով*	*հազար կՎտժ*								
	ցերեկային սակագնով	*հազար կՎտժ*								
	գիշերային սակագնով	*հազար կՎտժ*								
2)	*_____-ից գնված էլեկտրական էներգիա*	*հազար կՎտժ*								
3)	*_____-ից գնված էլեկտրական էներգիա*	*հազար կՎտժ*								
9.	Սևանա լճից բաց թողնված ջրի քանակը, որից՝	մլն խմ								
1)	*բաց թողնված ջրի քանակ էներգետիկ նպատակներով*	*մլն խմ*								
10.	Հիդրոէլեկտրակայանով անցած ջրի քանակը	մլն խմ								

№	Անվանումներ	Չափի միավոր	Ընդամենը	այդ թվում՝ ըստ հիդրոէլեկտրակայանների						
				.....	.....	.....	.....	.....	.....	.....
11.	Հիդրոէլեկտրակայանով անցած կողային ջրի քանակը	մլն խմ								
12.	Ոռոգման նպատակով բաց թողնված ջրի քանակը, այդ թվում՝	մլն խմ								
1)	*ջրի կորուստները*	*մլն խմ*								
13.	Ջրի ծավալը ջրամբարներում, այդ թվում՝	մլն խմ								
1)	_____	*մլն խմ*								
2)	_____	*մլն խմ*								
3)	_____	*մլն խմ*								
4)	_____	*մլն խմ*								

1. Սույն ձևով սահմանված տեղեկատվությունը ներկայացվում է՝ ամսական կտրվածքով և աճողական (ընթացիկ տարվա սկզբից)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 25 -ը:

2. Սույն ձևի 1-2-րդ կետերը լրացնում են միայն երկդրույք սակագնային համակարգում գործող լիցենզավորված անձինք, իսկ 9-րդ կետը՝ միայն Սևանա լճի ջրից օգտվող լիցենզավորված անձը:

3. Սույն ձևի 8-րդ կետի 1-ին ենթակետում նշվում են էլեկտրական էներգիայի լարումները, 2-րդ և 3-րդ ենթակետերում՝էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների անվանումները, իսկ 13-րդ կետում՝ ջրամբարների անվանումները:

_____

լիցենզավորված անձի (գործադիր մարմնի ղեկավարի) ստորագրությունը

Կ.Տ. (առկայության դեպքում)

_____

անունը, ազգանունը